ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 10.12.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/174

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20466-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 06.11.2018թ. թիվ 1.1/4833-18 գրության հիման վրա, 09.11.2018թ. թիվ 26-3/20466-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 16.11.2018թ. գրությամբ խնդրել է հետաձգել ՍՑ-ԱՄ-2018/174 ընթացակարգի շրջանակներում 16.11.2018թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստը և տրամադրել ողջամիտ ժամկետ գործի նյութերին ծանոթանալու և դիրքորոշում ներկայացնելու համար:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով 16.11.2018թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

«ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

3. ՀՀ Ազգային ժողովի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.

ՀՀ Ազգային ժողովը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 06.11.2018թ. թիվ 1.1/4833-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի կողմից օդորակիչների ձեքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին հայտերի ներկայացման վերջնաժամկետը տեղի է ունեցել ս./թ. հոկտեմբերի 23-ին ժամը 10:00-ին, որի մասով 1-ին և 2-րդ չափաբաժիններով առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն: Վերջինիս ուղարկվել է ծանուցում՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերի ներկայացման համար, սակայն գնման ընթացակարգի հերթական նիստը կասեցվել է, քանի որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 3-ը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին: Մանսավորապես առաջարկվող ապրանքի աղյուսակում ներառվել է գնառաջարկի սյունակ, սակայն գնառաջարկն արդեն ներկայացվել էր և աճուրդի արդյունքում վերջնական գնառաջարկը հաստատվել է eauction.am համակարգի միջոցով: «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին առաջարկվել է ուղղել պահանջվող փաստաթուղթը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս/թ. նոյեմբերի 3-ը, ժամը 10:00-ն) ներկայացնել ճշտված փաստաթուղթը, սակայն նշված

ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը չի ներկայացրել ճշտված փաստաթուղթը: Ուստի ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2018թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճ-ուրդի իրականացման» կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ հանձնաժողովը հայտերի գնահատման նպատակով հրավիրված նիստում մերժել է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթերըներկայցնելու պահանջ է ներկայացրել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնկցին:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/86 ընթացակարգի շրջանակներում 16.11.2018թ. ժամը 11:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/174 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար օդորակիչների ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ Աճուրդ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որին Կարգի 19-դ կետի 4-րդ ենթակետի համաձայն համակարգի միջոցով ծանուցվել է ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին

ուղարկվել է ծանուցում՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերի ներկայացման համար, սակայն գնման ընթացակարգի հերթական նիստը կասեցվել է, քանի որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 3-ը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին: Մանսավորապես առաջարկվող ապրանքի աղյուսակում ներառվել է գնառաջարկի սյունակ, սակայն գնառաջարկն արդեն ներկայացվել էր և աճուրդի արդյունքում վերջնական գնառաջարկը հաստատվել է eauction.am համակարգի միջոցով: «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին առաջարկվել է ուղղել պահանջվող փաստաթուղթը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս/թ. նոյեմբերի 3-ը, ժամը 10:00-ն) ներկայացնել ճշտված փաստաթուղթը, սակայն նշված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը չի ներկայացրել ճշտված փաստաթուղթը, որը հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը մերժել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի հայտը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20466-18 գրությունը, ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի 06.11.2018թ. թիվ 1.1/4833-18 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 11-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ առաջին տեղն զբաղեցրած ճանաչված մասնակիցը հրավերով սահմանված՝ որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի հետ միասին ներկայացնում է նաև իր կողմից հաստատված ապրանքների գնման դեպքում՝ առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Կարգի 20-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ

աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 23-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, ՀՀ Ազգային ժողովի կողմից ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար օդորակիչների ձեքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.10.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 2 արձանագրության 6-րդ կետի համաձայն՝ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով, որին Կարգի 19-դ կետի 4-րդ ենթակետի համաձայն համակարգի միջոցով ծանուցվել է

ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.11.2018թ. ժամը 10:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ուղարկվել է ծանուցում՝ հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերի ներկայացման համար, սակայն գնման ընթացակարգի հերթական նիստը կասեցվել է, քանի որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 3-ը չի համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին: Մասնավորապես առաջարկվող ապրանքի աղյուսակում ներառվել է գնառաջարկի սյունակ, սակայն գնառաջարկն արդեն ներկայացվել էր և աճուրդի արդյունքում վերջնական գնառաջարկը հաստատվել է eauction.am համակարգի միջոցով: «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին առաջարկվել է ուղղել պահանջվող փաստաթուղթը և մեկ աշխատանքային օրվա ընթացքում (մինչև ս/թ. նոյեմբերի 3-ը, ժամը 10:00-ն) ներկայացնել ճշտված փաստաթուղթը, սակայն նշված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը չի ներկայացրել ճշտված փաստաթուղթ, որը հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովը մերժել է «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի հայտը:

Այսպես ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 23-րդ կետի համաձայն՝ ***առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից*** *փաստաթղթերն* ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ ***հրավերով նախատեսված փաստաթղթերի***, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի ***գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:***

Կարգի 24-րդ կետի համաձայն՝ ***արձանագրված անհամապատասխանությունն առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից սահմանված ժամկետում՝***

1) շտկվելու դեպքում հայտը գնահատվում է բավարար, և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.

2) ***չշտկվելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է***, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Այսպիսով, վերը նշված նորմերը հստակ սահմանում են, որ այն դեպքում, երբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջների նկատմամբ արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում չի շտկվում, ապա հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն պատշաճ կերպով ծանուցված լինելով Հավելված 3-ում՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում, արձանագրված անհամապատասպանության մասին չի շտկել դրանք, ուստի գտնում եմ, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժելով «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ի հայտը գործել է իրավաչափ:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Վերոգրյալով պայմանավորված գտնում եմ, որ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ն «ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-18/11» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակում խախտել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, որի հետևանքով Ընկերության հետագա մասնակցությունը նշված ընթացակարգին դադարեցվել է:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 09.11.2018թ. թիվ 26-3/20466-18 գրությամբ «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02671392) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «ՌՎ Պրոջեկտս» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**